

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՅՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՉԱՓՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով ավտոճանապարհների տեխնոլոգիական միասնության պահպանմանն ու ավտոտրանսպորտով ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժի համար պայմանների ստեղծմանը, սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ավտոճանապարհներով միջպետական փոխադրումների արդյունավետության բարձրացմանը, գիտակցելով ավտոճանապարհների պահպանության ապահովման եւ ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովման կարելիությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործված են հետևյալ հասկացությունները.

"տրանսպորտային միջոց"՝ հարմարանք, որը նախատեսված է ավտոճանապարհներով ուղեւորների կամ բեռների կամ դրա վրա տեղադրված սարքավորումների փոխադրման համար,

"բեռնատար մեքենա"՝ մեխանիկական հաղորդամբ տրանսպորտային միջոց, որը նախատեսված է ավտոճանապարհներով բեռների փոխադրման համար,

"քարշակ"՝ տրանսպորտային միջոց, որն ունի սեփական շարժիչ եւ նախատեսված է բացառապես կամ առավելապես կցորդի կամ կիսակցորդի քարշի համար,

"կցորդ"՝ տրանսպորտային միջոց, որը նախատեսված է քարշակով կամ բեռնատար մեքենայով քարշման միջոցով բեռների փոխադրման համար,

"կիսակցորդ"՝ բեռների փոխադրման համար հատուկ սարքավորված տրանսպորտային միջոց, որը նախատեսված է քարշակի հետ միացման համար, այնպես, որ այդ տրանսպորտային միջոցի մի մասը տեղադրված լինի անմիջականորեն քարշակի վրա եւ դրան փոխանցի իր քաշի զգալի մասը,

"ավտոզնացք"՝ համակցված տրանսպորտային միջոց, որը կազմված է բեռնատար մեքենայից եւ կցորդից (կցորդային ավտոզնացք), քարշակից եւ կիսակցորդից (ստատեղերով ավտոզնացք),

"ավտոբուս"՝ ուղեւորների եւ ուղեբեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոց, որն ունի ավելի քան 8 ստատեղ, չհաշված վարորդի ստատեղը,

"միակցված ավտոբուս"՝ ավտոբուս՝ բաղկացած երկու կամ ավելի կոշտ բաժիններից, որոնք ամեն բաժնում ունեն ուղեւորատար սրահ եւ իրար հետ միացած են հողածեւ, ինչը թույլ է տալիս ուղեւորներին ազատ տեղափոխվել մի սրահից մյուսը,

"համակցված տրանսպորտային միջոց"՝ տրանսպորտային միջոցների համակցում, որը բաղկացած է կցորդի կամ կիսակցորդի հետ միացված ավտոմեքենայից,

"տրանսպորտային միջոցի առավելագույն երկարություն"՝ տրանսպորտային միջոցի երկարություն, որը չի գերազանցում 1-ին հավելվածում նշված մեծությունները,

"տրանսպորտային միջոցի առավելագույն բարձրություն"՝ տրանսպորտային միջոցի բարձրություն, որը չի գերազանցում 1-ին հավելվածում նշված մեծությունները,

"տրանսպորտային միջոցի առավելագույն լայնություն"՝ տրանսպորտային միջոցի լայնություն, որը չի գերազանցում 1-ին հավելվածում նշված մեծությունները,

"տրանսպորտային միջոցի առավելագույն զանգված"՝ տրանսպորտային միջոցի զանգված բեռով կամ առանց բեռի, որը չի գերազանցում 2-րդ հավելվածում նշված մեծությունները,

"սռնային առավելագույն զանգված"՝ տրանսպորտային միջոցի սռնու միջոցով

ավտոճանապարհի մակերեսին փոխանցվող զանգված, որը չի գերազանցում 3-րդ հավելվածում նշված մեծությունները,

"անբաժանելի բեռ" բեռ, որը ավտոճանապարհով փոխադրելիս, չի կարող բաժանվել երկու կամ ավելի մասերի առանց չափից ավելի ծախսերի կամ այդ բեռի փչացման ռիսկի,

"օդային կախոց"՝ կախոցային համակարգ, որում ամորտիզացիոն տարր է հանդիսանում օդը, որն ապահովում է առնվազն 75% ամորտիզացիոն արդյունք,

"հատուկ թույլտվություն"՝ երթուղիների մեկանգամյա թույլտվություն այնպիսի բեռ փոխադրող տրանսպորտային միջոցի համար, որի առավելագույն չափերը, զանգվածը եւ սռնային ծանրաբեռնվածությունը գերազանցում են 1-ին, 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված մեծությունները:

ՀՈԴՎԱԾ 2

Տրանսպորտային միջոցների՝ սույն Համաձայնագրով (1-ին, 2-րդ, 3-րդ հավելվածներ) նախատեսված առավելագույն չափերն ու զանգվածները եւ սռնային զանգվածները սահմանված են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ավտոճանապարհների համար, որոնցով իրականացվում են միջպետական եւ տարանցիկ փոխադրումներ, ներառյալ Անկախ Պետությունների Համագործակցության միջազգային ավտոճանապարհները: Տեղական ավտոճանապարհների համար Կողմերը կարող են սահմանել

տրանսպորտային միջոցների առավելագույն չափերի եւ թույլատրելի զանգվածի այլ պահանջներ, ընդ որում՝ այդ սահմանափակումները հավասարապես կգործեն եւ՝ այդպիսի սահմանափակումներ սահմանած Կողմի տրանսպորտային միջոցների, եւ՝ մյուս Կողմերի տրանսպորտային միջոցների նկատմամբ: Կողմերը տեղեկացնում են մյուս Կողմի փոխադրողներին տեղական ավտոճանապարհների համար սահմանված այլ պահանջների մասին:

ՀՈԴՎԱԾ 3

Առանձին ավտոճանապարհներին տրանսպորտային միջոցների չափերի եւ զանգվածի սահմանափակումներ մտցնելու դեպքում Կողմերի իրավասու մարմինները պարտավոր են այդ սահմանափակումները նշել համապատասխան ճանապարհային նշաններով:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը պարտավորվում են առանց հատուկ թույլտվությունների իրենց տարածքով, այդ թվում՝ տարանցիկ, բաց թողնել տրանսպորտային միջոցները, որոնց առավելագույն չափերը, տրանսպորտային միջոցների զանգվածները եւ սռնային ծանրաբեռնումը չեն գերազանցում սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող 1-ին, 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված մեծությունները:

ՀՈԴՎԱԾ 5

Այն տրանսպորտային միջոցները, որոնց չափված գծային չափանիշներից թեկուզ եւ մեկը գերազանցում է 1-ին հավելվածում նշված մեծությունները, համարվում են ոչ գաբարիտային:

Այն տրանսպորտային միջոցները, որոնց առավելագույն զանգվածը եւ/կամ սռնային զանգվածը գերազանցում է 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված մեծությունները, համարվում են ծանրաքաշ:

ՀՈԴՎԱԾ 6

Ոչ գաբարիտային եւ ծանրաքաշ տրանսպորտային միջոցները բաց են թողնվում

Կողմերի տարածք միայն հատուկ թույլտվության առկայության դեպքում, որը տրվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից եւ կարող են շարժվել միայն որոշակի երթուղով եւ այդ հատուկ թույլտվության մեջ նշված պայմաններով:

Իրենց տարածք ոչ գաբարիտային եւ ծանրաքաշ բեռների բաց թողման հատուկ թույլտվությունների տրման համար Կողմերը կարող են սահմանել վարձավճար ազգային նորմատիվ-իրավական ակտերով նախատեսված չափով: Կողմերը կձգտեն մոտեցնել այդ վճարների չափը:

ՅՈՒՐԱԿԱՆ 7

Սույն Համաձայնագրով տրանսպորտային միջոցների համար սահմանվող առավելագույն չափսերը եւ այլ գծային չափանիշները, տրանսպորտային միջոցների առավելագույն զանգվածը եւ տնու առավելագույն զանգվածը պահպանվում են որպես տրանսպորտային միջոցների չափսերի եւ զանգվածի առանձնացված պահանջներ՝ ելնելով գոյություն ունեցող ավտոճանապարհներով դրանց անարգել եւ առանց հսկողության բաց թողման հնարավորությունից: Այս սահմանափակումները չեն վերաբերում տրանսպորտային միջոցների արտադրությանն առնչվող չափանիշներին եւ պահանջներին, որոնք սահմանվում են այլ համաձայնագրերով:

ՅՈՒՐԱԿԱՆ 8

Ավտոճանապարհներով երթեւեկելու ժամանակ պետք է պահպանվեն ոչ գաբարիտային եւ ծանրաքաշ տրանսպորտային միջոցների երթեւեկության կարգն ու կանոնները կարգավորող Կողմերի հաստատած պահանջները: Այս հարցով Կողմերի ընդունած նորմատիվ-իրավական ակտերը պետք է հաշվի առնեն սույն Համաձայնագրի դրույթները:

ՅՈՒՐԱԿԱՆ 9

Կողմերը կարող են տրանսպորտային միջոցների չափսերի եւ զանգվածի ժամանակավոր սահմանափակումներ մտցնել առանձին ավտոճանապարհների կամ ավտոճանապարհային հատվածների վրա՝ ելնելով եղանակակլիմայական պայմաններից կամ

ավտոճանապարհների տեխնիկական վիճակի վատթարացումից՝ ժամանակին մյուս Կողմերի

փոխադրողներին տեղեկացնելով դրանց կիրառման մեջ մտցնելու եւ գործողության ժամկետների մասին, ինչպես նաեւ՝ նշելով շրջանցման հնարավոր ճանապարհները:

ՅՈՒՐԱԿԱՆ 10

Այն Կողմը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, ապահովում է այն այդ տրանսպորտային միջոցի հիմնական տեխնիկական բնութագիրը պարունակող փաստաթղթերով, որպեսզի ապահովի սույն Համաձայնագրով նախատեսված չափսերի եւ զանգվածների սահմանափակումների վերահսկումը:

Կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները ոչ գաբարիտային եւ ծանրաքաշ տրանսպորտային միջոցների բաց թողման հատուկ թույլտվությունների ձեւակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ ընթացակարգերի միասնականացման համար:

ՅՈՒՐԱԿԱՆ 11

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր կողմից լիազորված մարմինների միջոցով իրականացնել տրանսպորտային միջոցների չափսերի եւ զանգվածի վերահսկում, անկախ դրանց գրանցման տեղից, եւ խախտողների հանդեպ կիրառել ազգային օրենսդրությամբ նախատեսված միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 12

Փոխադրումներ իրականացնելու ժամանակ Կողմերը պետք է ձգտեն, որպեսզի տրանսպորտային միջոցների զանգվածը եւ չափսերը չգերազանցեն սույն Համաձայնագրով նախատեսված սահմանները: Այս պահանջը չի տարածվում անբաժանելի բեռների փոխադրման վրա, եւ դրանց բաց թողնումն իրականացվում է հատուկ թույլտվության ձեւակերպման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 13

Կողմերը կձգտեն տրանսպորտային միջոցների՝ սույն Համաձայնագրի հավելվածներում նշված չափսերի եւ զանգվածների չափման մեթոդների միասնականացմանը:

ՀՈԴՎԱԾ 14

Կողմերը միջոցներ կձեռնարկեն, որպեսզի սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ավտոճանապարհները, որոնք մտնում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջազգային ավտոճանապարհների համակարգի մեջ, լիովին համապատասխանեն դրանցով՝ սույն Համաձայնագրով սահմանված առավելագույն չափսեր եւ զանգված ունեցող տրանսպորտային միջոցների բաց թողնման պահանջներին:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ, ավելի վաղ ստորագրված միջազգային, այդ թվում՝ Կողմերի միջեւ կնքված, պայմանագրերից եւ համաձայնագրերից, որոնց մասնակից են նրանք հանդիսանում, բխող իրավունքները եւ պարտավորությունները եւ չի խոչընդոտում այլ միջազգային պայմանագրերի կնքմանը:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագրում, Կողմերի ընդհանուր համաձայնությամբ, կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել, որոնք կձեւակերպվեն արձանագրություններով:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը կլուծվեն շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 18

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից բոլոր անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար՝ այն ուժի մեջ է մտնում ավանդապահին համապատասխան փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 19

Սույն Համաձայնագիրը գործում է դրա ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա

ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրն ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ հաջորդ հնգամյա ժամանակահատվածով, եթե Կողմերն այլ որոշում չընդունեն:

ՀՈԴՎԱԾ 20

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 21

Սույն Համաձայնագիրը, բոլոր Կողմերի համաձայնությամբ, բաց է դրա նպատակներն ու սկզբունքները կիսող պետությունների կողմից միանալու համար՝ ավանդապահին այդպիսի միացման մասին փաստաթղթերի հանձնման միջոցով: Միացումն համարվում է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից այդպիսի միացման համաձայնության մասին վերջին հաղորդագրությունը ստանալու օրվանից:

Կատարված է Մինսկ քաղաքում 1999 թվականի հունիսի 4-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված 1

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Տրանսպորտային միջոցների առավելագույն չափսերը, հաշվի առնելով Համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթները, չպետք է գերազանցեն ներքեւում բերված թվերը.

1.1. Առավելագույն երկարությունը՝		
բեռնատար ավտոմեքենայի	12,00 մ	
ավտոբուսի	12,00 մ	
կցորդի	12,00 մ	
միակցված տրանսպորտային միջոցի	20,0 մ	
միակցված ավտոբուսի	18,00 մ	
ավտոզնացքի	20,00 մ	
1.2. Առավելագույն լայնությունը՝		
բոլոր տրանսպորտային միջոցների	2,55 մ	
տրանսպորտային միջոցների իզոթերմիկ թափքերի	2,60 մ	
1.3. Առավելագույն բարձրությունը՝	4,00 մ	

2. Սույն Հավելվածի 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցների առավելագույն չափսերն իրենց մեջ ներառում են հանովի թափքերի եւ բեռների տարաների, ներառյալ բեռնարկղերի չափսերը:

3. Ցանկացած տրանսպորտային միջոց շարժման ժամանակ պետք է ապահովի պտույտ 12,50 մ արտաքին շառավիղով եւ 5,30 մ ներքին շառավիղով՝ սահմանափակված տարածության սահմաններում:

4. Ամրացման կունդի փականի սռնու եւ համակցված տրանսպորտային միջոցի հետին մասի միջեւ առավելագույն հեռավորությունը չպետք է գերազանցի 12,00 մ-ը:

5. Ավտոզնացքի երկայնական սռնուն զուգահեռ չափված առավելագույն հեռավորությունը, վարորդական խցիկի հետեւում թափքի կամ բեռի տեղադրման կառավարողի արտաքին դիմային կետից մինչեւ կցորդի հետին արտաքին կետը, չհաշված քարշակի հետին մասի եւ կցորդի դիմային մասի միջեւ հեռավորությունը, չպետք է գերազանցի 17,0 մ-ը:

6. Ավտոգնացքի երկայնական սռնուն զուգահեռ չափված առավելագույն հեռավորությունը, վարորդական խցիկի ետևում թափքի կամ բեռի տեղադրման կառամատույցի արտաքին դիմային կետից մինչև կիսակցորդի հետին արտաքին կետը, չպետք է գերազանցի 16,40 մ:

7. Տրանսպորտային միջոցի թափքում տեղադրված բեռը չպետք է դուրս գա ավտոտրանսպորտի կամ կցորդի հետին արտաքին կետից 2.00 մ-ից ավելի:

8. Բեռնատար մեքենայի հետին սռնու եւ կցորդի դիմացի սռնու միջև հեռավորությունը պետք է լինի առնվազն 3,00 մ:

9. Կիսակցորդի հողակապային միացման եւ կիսակցորդի դիմացի մասի ցանկացած կետի միջև հորիզոնական չափված հեռավորությունը չպետք է գերազանցի 2,04 մ:

10. Տրանսպորտային միջոցի երկարությունը պետք է չափվի ISO 612-1978 ստանդարտի 6.1. կետին համապատասխան: Ընդ որում, երկարության չափման դեպքում հաշվի չեն առնվում տրանսպորտային միջոցի վրա տեղադրված հետեւյալ սարքավորումները՝

ապակիների մաքրման սարքավորումներ եւ ջրացայտիչներ,
դիմային եւ կողային նշագրումային սալիկներ,
կապարակնքման հարմարանքներ եւ դրանց պաշտպանիչ միջոցներ,
բրեզենտի ամրացման հարմարանքներ եւ դրանց պաշտպանիչ միջոցներ,
Էլեկտրալուսավորության սարքավորումներ,
հետին դիտման հայելիներ եւ ավտոմեքենայի ետեւի տարածության դիտման հարմարանքներ,

օդատար խողովակներ,
փականների երկարություններ եւ կցորդներին կամ հանովի թափքերին միացնելու համար սարքավորումներ,

թափք մուտք գործելու աստիճաններ, պահեստային անվադողի ամբարձիչ, բարձրացվող կառամատույցներ, աստիճաններ, այլ նմանատիպ սարքավորում, որը աշխատանքային ռեժիմում չի գերազանցում 200 մմ եւ որն այնպես է պատրաստված, որպեսզի այն չկարողանա ավելացնել արտադրողի կողմից սահմանված՝ ավտոմեքենայի առավելագույն բեռնվածության սահմանային զանգվածը:

11. Տրանսպորտային միջոցի բարձրությունը պետք է չափվի ISO 612-1978 չափանիշի 6.3 կետին համապատասխան: Բարձրության չափման ժամանակ չպետք է հաշվի

առնվեն տրանսպորտային միջոցների վրա տեղադրված անտենաները, բարձրացված վիճակում գտնվող պանտոգրաֆը:

Սռնին բարձրացնելու հարմարանք ունեցող տրանսպորտային միջոցների համար պետք է հաշվի առնվի այդ հարմարանքի ազդեցության էֆեկտը:

12. Տրանսպորտային միջոցի լայնությունը պետք է չափվի ISO 612-1978 չափանիշի 6.2 կետին համապատասխան: Ընդ որում, լայնությունը չափելիս հաշվի չեն առնվում տրանսպորտային միջոցի վրա տեղադրված հետեւյալ հարմարանքները՝

կապարակնքման, կնքման համար հարմարանքներ եւ դրանց պաշտպանիչ միջոցներ,
բրեզենտի ամրացման հարմարանքներ եւ դրանց պաշտպանիչ միջոցներ,
անվադողերի վնասումը հայտնաբերելու համար հարմարանքներ,
ջրացայտիչների դուրս եկած մասեր,
լուսավորող սարքավորումներ,

աստիճաններ, կախովի կառամատույցները եւ այլ նմանատիպ սարքավորումներ, որոնք աշխատանքային վիճակում տրանսպորտային միջոցի ամեն կողմից դուրս են գալիս ոչ ավել, քան 10 մմ, որոնց առաջ կամ հետ ուղղված աստիճանների անկյուններն ունեն առնվազն 5 մմ կլորացման շառավիղ, իսկ նրանց ծայրերը՝ առնվազն 2,5 մմ կլորացման շառավիղ,

հետին դիտման հայելիներ,
անվադողերի ճնշման ցուցիչներ,

փոխադրման վիճակում ներս քաշվող կամ հավաքվող աստիճաններ,
անվադողի մակերեսի թեքված մասը, որը ճանապարհի հետ շփման կետից դուրս է գալիս:

Հավելված 2

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՆԳՎԱԾԸ

1. Տրանսպորտային միջոցների առավելագույն զանգվածը չպետք է գերազանցի ներքոհիշյալ մեծությունները՝

1.1. Բեռնատար մեքենաներ՝

երկառնի ավտոմեքենա - 18 տ

եռասռնի ավտոմեքենա - 24 տ

եռասռնի ավտոմեքենա, որն ունի երկու զույգ անիվներից բաղկացած շարժահաղորդ սռնի, որոնք սարքավորված են օդային կամ նրան համարժեք կախոցով - 25 տ

քառասռնի ավտոմեքենա՝ երկու շարժահաղորդ սռնիներով, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երկու զույգ անիվներից եւ ունի օդային կամ նրան համարժեք կախոց - 32 տ

1.2 Համակցված տրանսպորտային միջոցի մաս կազմող տրանսպորտային միջոցներ՝

երկառնի կցորդ 18 տ

եռասռնի կցորդ 24 տ

1.3 Համակցված տրանսպորտային միջոցներ՝

1.3.1 *** Նստատեղիներով ավտոզնացքներ՝

երկառնի քարշակ երկառնի կիսակցորդով՝ կիսակցորդի սռնիների միջեւ 1,3 մ եւ ավելի, բայց ոչ ավելի քան 1,8 մ հեռավորությամբ - 36 տ

երկառնի քարշակ երկառնի կիսակցորդով՝ կիսակցորդի սռնիների միջեւ 1,8 մ գերազանցող հեռավորությամբ 38 տ

երկառնի քարշակ եռասռնի կիսակցորդով 38 տ

եռասռնի քարշակ երկառնի կիսակցորդով 38 տ

եռասռնի քարշակ եռասռնի կիսակցորդով 38 տ:

18 տոննանոց բեռնատարից եւ 20 տոննանոց կիսակցորդից բաղկացած տրանսպորտային միջոցի համար սույն հավելվածի 1.3.1 (բ) կետի համաձայն առավելագույն զանգվածը կարող է ավելացվել 2 տ-ով այն դեպքում, եթե տրանսպորտային միջոցն ունի միացված անիվներից բաղկացած շարժահաղորդ սռնի եւ սարքավորված է օդային կամ դրան համարժեք կախոցով:

*** 1 1.3.1. Ուղբեկստանի Հանրապետության տարածքով միջպետական փոխադրումներ կատարող ավտոտրանսպորտային միջոցների համար:

Նստատեղերով ավտոզնացքներ.

երկառնի քարշակ միասռնի կցորդով 28 տ

երկառնի քարշակ երկառնի կիսակցորդով՝ կիսակցորդի սռնիների միջեւ 1,3 մ եւ ավելի, բայց ոչ ավելի քան 1,8 մ հեռավորությամբ, 36 տ

երկառնի քարշակ երկառնի կիսակցորդով՝ կիսակցորդի սռնիների միջեւ 1,8 մ-ը գերազանցող

ավելի հեռավորությամբ 40 տ

երկառնի քարշակ եռասռնի կիսակցորդով 40 տ

եռասռնի քարշակ երկառնի կիսակցորդով 40 տ

եռասռնի քարշակ եռասռնի կիսակցորդով 40 տ

1.3.1.2. Ղազախստանի Հանրապետության տարածքով միջպետական փոխադրումներ կատարող ավտոտրանսպորտային միջոցների համար, եւ Ղազախստանի Հանրապետության

ավտոտրանսպորտային միջոցների համար, որոնք միջպետական փոխադրումներ են իրականացնում սույն Համաձայնագրի մյուս մասնակից պետությունների տարածքով.

ավտոտրանսպորտային միջոցի առավելագույն ընդհանուր քաշը 36 տ

1.3.2 ** Կցորդային ավտոգնացքներ՝	
երկսունի բեռնատար մեքենա երկսունի կցորդով	36 տ
երկսունի բեռնատար մեքենա եռասունի կցորդով	42 տ
եռասունի բեռնատար մեքենա երկսունի կցորդով	42 տ
եռասունի բեռնատար մեքենա եռասունի կցորդով	44 տ
եռասունի բեռնատար մեքենա քառասունի կցորդով	44 տ

** 1.3.2.1. Բելառուսի Հանրապետության տարածքով միջպետական փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների համար, եւ սույն Համաձայնագրի մյուս մասնակից պետությունների տարածքով միջպետական փոխադրումներ իրականացնող Բելառուսի Հանրապետության ավտոտրանսպորտային միջոցների համար:

Կցորդային ավտոգնացքներ.	
երկսունի բեռնատար մեքենա երկսունի կցորդով	36 տ
այլ ավտոգնացքներ	38 տ

1.4 Ավտոբուսներ՝	
երկսունի	18 տ
եռասունի	24 տ
եռասունի՝ հողածել միակցված	28 տ
քառասունի՝ հողածել միակցված	28 տ

Հավելված 3

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍՈՆԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾՆԵՐԸ *

1. Տրանսպորտային միջոցների առավելագույն սռնային զանգվածը չպետք է գերազանցի ներքոհիշյալ մեծությունները՝

1.1 Մեկ սռնու համար.	
շարժահաղորդ	10,0 տ
շարժահաղորդ երկակի անիվներով	10,0 տ

1.2. Կրկնակի սռնու, երկակի անիվներով կցորդների կամ կիսակցորդների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջեւ հետեւյալ հեռավորությունների դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ մինչեւ 1 մ	12,0 տ
1 մ մինչեւ 1,3 մ	14,0 տ
1,3 մ մինչեւ 1,8 մ	16,0 տ
1,8 մ կամ ավելի	18,0 տ

1.3. Միակողմ անիվներով կցորդների կամ կիսակցորդների կրկնակի սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջեւ հետեւյալ հեռավորությունների դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ մինչեւ 1 մ	11,0 տ
1 մ մինչեւ 1,3 մ	13,0 տ
1,3 մ մինչեւ 1,8 մ	15,0 տ
1,8 մ կամ ավելի	17,0 տ

1.4. Երկակի անիվներով կցորդների կամ կիսակցորդների եռասունի սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջեւ հետեւյալ հեռավորությունների դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ մինչեւ 1 մ	16,5 տ
սկսած 1,0 մ-ից, բայց ոչ ավելի քան 1,3 մ	19,5 տ
1,3 մ մինչեւ 1,8 մ	22,5 տ
1,8 մ կամ ավելի	25,5 տ

1.5. Միակողմ անիվներով կցորդների կամ կիսակցորդների եռասունի սռնիների համար սռնիների միջեւ հետեւյալ հեռավորության դեպքում.

0,5 մ մինչև 1 մ	15,0 տ
1,0 մ մինչև 1,3 մ	18,3 տ
1,3 մ մինչև 1,8 մ	21,0 տ
1,8 մ կամ ավելի	24,0 տ

1.6. Երկակի անիվներով բեռնատարի կամ ավտոբուսի կրկնակի շարժահաղորդ սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջև հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ մինչև 1 մ	12,0 տ
1 մ մինչև 1,3 մ	14,0 տ
1,3 մ մինչև 1,8 մ	16,0 տ
1,8 մ կամ ավելի	18,0 տ

Նույնը օդային կամ համազոր կախոցի վրա ամրացման դեպքում՝ 19,0 տ

1.7 Միակողմ անիվներով բեռնատարի կամ ավտոբուսի կրկնակի շարժահաղորդ սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջև հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

մինչև 1 մ	11,0 տ
1 մ մինչև 1,3 մ	13,0 տ
1,3 մ մինչև 1,8 մ	15,0 տ

2. Ավտոմեքենայի կամ համակցված տրանսպորտային միջոցի շարժահաղորդ սռնու կամ սռնիների վրա փոխանցվող քաշը չպետք է լինի ավտոմեքենայի կամ համակցված տրանսպորտային միջոցի ընդհանուր քաշի 25%-ից քիչ:

* Ղազախստանի Հանրապետության տարածքով միջպետական փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների համար, եւ սույն Համաձայնագրի մյուս մասնակից պետությունների տարածքներով միջպետական փոխադրումներ իրականացնող Ղազախստանի Հանրապետության ավտոտրանսպորտային միջոցների համար.

1. Տրանսպորտային միջոցների առավելագույն սռնային զանգվածը չպետք է գերազանցի ներքոհիշյալ մեծությունները.

1.1 Մեկ սռնու համար. շարժահաղորդ	8,0 տ
շարժահաղորդ երկակի անիվներով	8,0 տ

1.2 Երկակի անիվներով կցորդների կամ կիսակցորդների, կրկնակի սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջև հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ-ից ավելի, բայց 1 մ-ից քիչ	12,0 տ
1 մ կամ ավելի, բայց 1,3 մ-ից քիչ	13,0 տ
1,3 մ կամ ավելի, բայց 1,8 մ-ից քիչ	14,2 տ
1,8 մ կամ ավելի	14,6 տ

1.3 Միակողմ անիվներով կցորդների կամ կիսակցորդների կրկնակի սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջև հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ-ից ավելի, բայց 1 մ-ից քիչ	11,0 տ
1 մ կամ ավելի, բայց 1,3 մ-ից քիչ	12,0 տ
1,3 մ կամ ավելի, բայց 1,8 մ-ից քիչ	13,2 տ
1,8 մ կամ ավելի	13,6 տ

1.4 Երկակի անիվներով կցորդների կամ կիսակցորդների եռասռնի սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջև հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ-ից ավելի, բայց 1 մ-ից քիչ	- 17,4 տ
1 մ կամ ավելի, բայց ոչ ավելի, քան 1,3 մ	- 18,4 տ
1,3 մ կամ ավելի, բայց 1,8 մ-ից քիչ	- 21,2 տ
1,8 մ կամ ավելի	- 21,9 տ

1.5 Միակողմ անիվներով կցորդների կամ կիսակցորդների եռասռնի սռնիների

համար սռնիների միջեւ հետեւյալ հեռավորությունների դեպքում.

0,5 մ-ից ավելի, բայց 1 մ-ից քիչ	15,9 տ
1 մ կամ ավելի, բայց ոչ ավելի, քան 1,3 մ	17,2 տ
1,3 մ կամ ավելի, բայց 1,8 մ-ից քիչ	19,7 տ
1,8 մ կամ ավելի	20,4 տ

1.6 Երկակի անիվներով բեռնատարի կամ ավտոբուսի կրկնակի շարժահաղորդ սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջեւ հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

0,5 մ-ից ավելի, բայց 1 մ-ից քիչ	12,0 տ
1 մ կամ ավելի, բայց 1,3 մ-ից քիչ	14,0 տ
1,3 մ կամ ավելի, բայց 1,8 մ-ից քիչ	16,0 տ
1,8 մ կամ ավելի	18,0 տ

և ույնը օդային կամ համագոր կախոցի վրա ամրացման դեպքում 19,0 տ,

1.7 Միակողմ անիվներով բեռնատարի կամ ավտոբուսի կրկնակի շարժահաղորդ սռնիների համար սռնիների զանգվածների գումարը սռնիների միջեւ հետեւյալ հեռավորության դեպքում չպետք է գերազանցի.

1 մ-ից քիչ	11,0 տ
1 մ կամ ավելի, բայց 1,3 մ-ից քիչ	13,0 տ
1,3 մ կամ ավելի, բայց 1,8 մ-ից քիչ	15,0 տ

2. Ավտոմեքենայի կամ համակցված տրանսպորտային միջոցի շարժահաղորդ սռնու կամ սռնիների վրա ընկնող քաշը չպետք է լինի ավտոմեքենայի կամ համակցված տրանսպորտային միջոցի ընդհանուր քաշի 25%-ից քիչ:

* Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրը ստորագրել է դիտողություններով (չեն ներկայացվել):

** Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 27-ից: